ՅՈՒՐԱ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ ՀԱՏՈՒԿ
ARMENIAN-SOCCER.COM ԿԱՅՔԻ ՀԱՄԱՐ:

Բոլոր թերթերը, ինտերնետ-կայքերը, ամսագրերը կարող են օգտագործել այս նյութը՝ նշելով բնօրինակը – armenian-soccer.com: Իրավունք չկա օգտագործելու այս նյութը վաճառքի կամ այլ մարքետինգային նպատակներով:

AS: Նախ, շնորհավորում ենք հոյակապ խաղերի համար Սլովակիայի ու Անդորրայի ընտրանիների դեմ: Ինչպե՞ս էիր քեզ զգում այդ հանդիպումներից հետո:

Յուրա Մովսիսյան. Ինձ թվում է, որ այդ խաղերը ցույց տվեցին ինչպես ինձ, այնպես էլ ողջ հայ ժողովրդին, որ մենք ճիշտ ուղու սկզբնամասում ենք գտնվում ու հետագայում կարող ենք պայքարել ավելի բարձր հորիզոնականների համար:

AS: Ինչպե՞ս ես գնահատում հենց քո խաղը այդ երկու հանդիպումներում:

Յ.Մ.: Կարծում եմ՝ ես կարող էի ավելի շատ գոլեր խփել, բայց ամեն դեպքում մենք հաղթել ենք ու կարեւորը դա է:

AS: Բավական կարճ ժամանակահատվածում դու դարձար մեր ազգային թիմի առաջատարներից մեկը: Չե՞ս զղջում, որ ընտրությունդ Հայաստանի ու ԱՄՆ-ի հավաքականների միջեւ Հայաստանի օգտին կատարեցիր:

Յ.Մ.: Բացարձակ չեմ զղջում: Կյանքումս շատ որոշումներ եմ կայացրել, որոնցից տարբեր մարդիկ զարմացել են, բայց ես միշտ վստահ եմ իմ արածներում: Իմ նպատակը կարիերայիս այս հատվածում միջազգային մակարդակի ֆուտբոլ խաղալն էր, ու ես պատրաստ էի որ մարտահրավերների:

AS: ինչպե՞ս ես գնահատում մեր հավաքականի շանսերը ԵՎՐՈ-2012-ի ընտրական փուլում:

Յ.Մ.: Կարծում եմ՝ մենք գերազանցել ենք մեր հակառակորդների սպասելիքները, բայց մեր թիմը բավական երիտասարդ է ու անփորձ՝ նման խաղերի համար, ուստի ես չեմ կարող կանխագուշակել, թե ինչ տեղի կունենա հաջորդ հանդիպումներում:

AS: Մեր ազգային թիմ լավ է խաղում Երեւանում, բայց ոչ հյուրընկալվելիս: Ո՞ր արտագնա հանդիպումն քեզ ամենադժվարը թվում՝ Ռուսաստանի, Սլովակիայի թե՞ Իռլանդիայի հավաքականների դեմ:

Յ.Մ: Բոլոր խաղերն էլ հավասարաչափ դժվար են լինելու, պարզապես պետք է միշտ պատրաստվել կոնկրետ խաղի՝ հետոն մի կողմ դնելով…

AS: Մեր հավաքականի լավագույն ռմբարկու Արթուր Պետրոսյանը հայտարարել է, որ իր ռեկորդը՝ 11 գոլը, շուտով կգերազանցվի, եւ դու էլ թիվ մեկ հավակնորդն ես… Ի՞նչ կասես:

Յ.Մ.: Իմ կարծիքով 11 գնդակը լավ ցուցանիշ է, բայց ես որպես հարձակվող միշտ փորձում եմ գերազանցել իմ առջեւ կանգնած բոլոր ռեկորդները:

AS: Կարծես թե հեշտությամբ ձուլվեցիր հավաքականում, քո թիմում: Ադապտացիայի խնդիրներ չունեցա՞ր:

Յ.Մ.:Իմ մարզիչները եւ թիմակիցները օգնեցին ինձ բավական կարճ ժամանակահատվածում ադապտացվել: Բացի այդ՝ իմ խաղառճը բավական ճկուն է, ինչը թույլ է տալիս հեշտությամբ համակերպվել ցանկացած թիմային ոճի:

AS: Ըստ քեզ, ի՞նչն է պատճառը, որ հայ ֆուտբոլիստներից շատերը իրենց չեն կարողանում դրսեւորել եվրոպական թիմերում:

Յ.Մ: Իմ կարծիքով մեր ֆուտբոլիստներին թույլ չեն տվել ցուցաբերել իրենց ունակությունները, հնարաորություն չեն ընձեռել: Մերոնք պարզապես պետք է վստահ լինեն իրենց ուժերին, երբ տեղափոխվում են որեւէ արտասահմանյան ակումբ:

AS: «Ռանդերսը» չի դասվում ո՛չ Եվրոպական եւ ո՛չ էլ դանիական ֆուտբոլի գրանդներին: Այս պարագայում ի՞նչ է տվել քեզ այդ թիմ տեղափոխումը:

Յ.Մ.: Կարծում եմ, ավելի լավ ֆուտբոլային որակներ եմ ձեռք բերել՝ հանդես գալով «Ռանդերսում» ու զգալով, որ կարող եմ խաղալ ցանկացած պայմաններում:

AS: «Ռանդերսի» մարզաշապիկով անցկացրած 32 խաղերում 20 գնդակ ես խփել: Եթե ավելի ուժեղ թիմում հանդես գայիր, կարո՞ղ էիր ավելի շատ գոլի հեղինակ դառնալ:

Յ.Մ.: Բնականաբար, շատ ավելի հեշտ է գոլեր խփել, երբ խաղում ես ուժեղ թիմում, բայց չեմ կարծում, որ ես հնարավորություններս չեմ օգտագործել, քանի որ հիմնականում ինքս եմ ինձ համար ստեղծում գոլ խփելու շանսերը:

AS: Այժմ լուրեր են շրջանառվում, որ դու տեղափոխվելու ես այս կամ այն թիմ: Դա քեզ շա՞տ է շեղում:

Յ.Մ.: Առհասարակ չեն շեղում: Նման լուրերը ֆուտբոլի մասնիկն են, եւ եթե դու լավ ֆուտբոլիստ ես, դրանք մշտապես քեզ հետեւելու են:

AS: Քո գործակալը հարցազրույցներից մեկում ասել էր, որ «մենք չենք մերժի Վենգերի կամ Մոուրինյոյի հրավերը» շեշտելով, որ ցանկանում ես խաղալ Չեմպիոնների լիգայում: Այդ բառերը հստակ փաստերո՞վ կամ գրանդ թիմերից առաջարկություններո՞վ են հիմնավորված:

Յ.Մ.: Ոչ, միայն ցանկությամբ:

AS: Իսկ ցանկություն ունես մնալ Դանիայում, եթե, օրինակ, հրավեր ստանաս «Կոպենհագենից»:

Յ.Մ.: Մեծ հաճույքով… «Կոպենհգենը» շատ ուժեղ թիմ է, որը հավասար պայքարում էր «Բարսելոնայի» հետ ՉԼ-ում:

AS: Տեղյա՞կ ես, որ քեզանով հետաքրքրվում է ռուսական «Ռուբինը»: Ի՞նչ ես կարծում, Ռուսաստան տեղափոխվելը կլինի քո պարագայում:

Յ.Մ.: Ռուսական պրեմիեր-լիգան բավական մրցունակ առաջնություն է, նրանց թիմերը մշտապես մասնակցում են Չեմպիոնների լիգայի եւ Եվրոպայի լիգայի մրցաշարերին:

AS: Ո՞ր երկրի առաջնությունն է քեզ գրավում: Որտե՞ղ կցանկանաս խաղալ:

Յ.Մ.: Ես պատրաստ եմ տեղափոխվել ցանկացած մեծ ակումբ:

AS: Իսկ ո՞ր թիմում ես երազում խաղալ:

Յ.Մ.: «Արսենալում» կամ Մադրիդի «Ռեալում»:

AS: Քո խաղի ո՞ր բաղկացուցիչները պետք է կատարելագործվե՞ն:

Յ.Մ.:Բոլոր

AS: Ցակացած ֆուտբոլիստ լավ մարզչի կարիք ունի, ով օգնում է բացահայտել ու ցուցադրել ֆուտբոլիստի լավագույն որակներն ու խաղը: Ժամանակակից ֆուտբոլի ո՞ր մարզչի հետ ինքդ կցանկանայիր աշխատել:

Յ.Մ.: Արսեն Վենգերի

AS: Ի՞նչ հետաքրքրություն ունես ֆուտբոլից բացի, ինչո՞վ ես զբաղվում՝ բացի գոլ խփելուց:

Յ.Մ.: Խաղում եմ FIFA, շատ ժամանակ եմ անցկացնում ընկերներիս եւ ընտանիքիս հետ:

AS: Շնորհակալ ենք հարցազրույցի համար: Քեզ հաջողություն ենք ցանկանում ե՛ւ ակումբում ե՛ւ հավաքականում:

Յ.Մ.: Շնորհակալություն:

Լուսանկարներ. TotalFootball (www.totalfootball.am), ArmSport (www.armsport.am), Armenian Soccer արխիվ:

©2010 Armenian Soccer